Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2013թ. հուլիսի 24-ի
N24-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2h-1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «23» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, ի դեմս Հայկ Դեմոյանի (այսուհետև՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 94304600 (իննսունչորս միլիոն երեք հարյուրչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.4. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում)

գ. Իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. Ծրագրի կատարման համար, օրենադրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվություն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է Կազմակերպությանը:

2.3.5. Ստուգել և ամփոփել կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափիմասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ.

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված զիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ-ին հանձնել սահմանված ժամկետում:

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին.

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու

որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. Իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. Սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ շրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները ճշնդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

3. Թեմայի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 94304600 (իննսունչորս միլիոն երեք հարյուրչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 86760232 (ութսունվեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն Պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով:.Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

9.2.1. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված ծրագրի հայտը.

9.2.2. Առաջադրանքը (Հավելված 1).

9.2.3. Օրացուցային պլանը (Հավելված 2).

9.2.4. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3)

9.2.5. Գիտական ծրագրի նախահաշիվը (Հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՊՈԱԿ
Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1810052108913313

Տնօրեն՝ Հայկ Դեմոյան

Ռ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ. Տ.

Հավելված 1
«23» 01 2015թ.
N 22-1 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը՝ Աշխատանքի նպատակը՝ ապահովել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գործունեության և ծրագրերի իրականացումը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները պետք է իրականացվեն պատշաճ մակարդակով: Դրա արդյունքում պետք է ապահովվի ծրագրավորված աշխատանքային ծավալի իրականացումը: Գիտական ծրագրերի իրականացումը պետք է կատարվի պատշաճ ակադեմիական մակարդակով՝ ապահովելով կատարվող ուսումնասիրությունների արդիականությունն ու գիտական նորույթը:
4. Աշխատանքի բովանդակությունը

   Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն իր գործունեության շրջանակներում իրականացնում է բազմակողմանի հետազոտություններ, որոնք վերաբերում են Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության պատմությանը, ինչպես նաև Անդրկովկասում հայերի դեմ իրագործված ցեղասպանության պատմության և նախացեղասպանական ժամանակաշրջանում արևմտահայության կյանքի ուսումնասիրմանը: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև Հայոց ցեղասպանության հետևանքների և դրանից հետո ծավալված մարդասիրական օգնության ուսումնասիրմանը:

   Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպումը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական գործունեության առանցքային ուղություններից մեկն է: Տարվող լայնածավալ գիտահավաքչական աշխատանքի և գիտական հետազոտությունների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում բարձր գիտական հիմքերի վրա կազմակերպել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ցուցադրությունը՝ պարբերաբար թարմացնելով և ցուցադրության մեջ նորահայտ նյութեր ներառելով:

Մեծ Եղեռնի հարյուրամյակի կապակցությամբ այս տարի նախատեսվում է Հայոց ցեղասպանության թանգարանի վերանորոգված և ընդլայնված շենքի բացումը, որտեղ ներկայացվելու է նոր հայեցակարգի հիման վրա թանգարանային նոր ցուցադրությունը:

Բացի մշտական ցուցադրությունից, Հայոց ցեղասպանության թանգարանում պարբերաբար կազմակերպվում են ժամանակավոր ցուցադրություններ: Սկսած 2007 թվականից պատրաստվել և հանրության դատին է հանձնվել բազմաթիվ ժամանակավոր ցուցադրություններ, որոնց մի մասը՝ արտասահմանյան տարբեր երկրներում:

ՀՑԹԻ գործունեության կարևոր մաս են կազմում հավաքչական աշխատանքները: Վերջին տարիների ընթացքում հնարավոր եղավ զգալիորեն հարստացել ՀՑԹԻ գիտական ֆոնդերը և գրադարանը: Այժմ որակական և քանակական առումներով այն հանդիսանում է ինչպես Հայոց ցեղասպանության պատմության, այնպես էլ ընդհանուր ցեղասպանագիտության թեմայով ամենահարուստ հավաքածուն:

2007 թվականի հուլիսից գործարկվել է ՀՑԹԻ ինտերնետային կայքը: Կայքում ներկայացված են բազմաբնույթ տեղեկություններ Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ՝ ուղեկցվող լուսանկարային նյութով: Մասնավորապես, պատրաստվել է շուրջ երկու տասնյակ օնլայն ցուցադրություն: Կայքը հնգալեզու է՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և թուրքերեն:

Գրահրատարակչական գործունեություն. ՀՑԹԻ-ն իր հիմնադրման օրվանից ծավալել է ակտիվ գրահրատարակչական գործունեություն, ինչի շնորհիվ ընթերցողների դատին են հանձնվել բազմաթիվ մենագրություններ և աշխատություններ՝ ուղղակիորեն կամ անուղղակի կերպով կապված Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հետ:

Գիտաժողովների կազմակերպումը ևս հանդիսանում է ՀՑԹԻ գործունեության կարևորագույն մաս:

Սկսած 2007 թվից կազմակերպվել է յոթ միջազգային գիտաժողով:

Շարունակաբար իրականացվում են ՀՑԹԻ մասնաշենքի և Մեծ Եղեռնի հուշահամալիրի պահպանման և Ծիծեռնակաբերդի զբոսայգու կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ: Մասնավորապես, Ծիծեռնակաբերդի զբոսայգու բարեկարգման և կանաչապատման նպատակով իրականացվում է ոռոգման ցանցի վերանորոգման և ընդլայման աշխատանք, զբոսայգում պարբերաբար իրականացվում է ծառատունկ:

ՀՑԹԻ –ին ծրագրում է նշված ուղղություններով շարունակել գործունեությունը 2015 թվականին:

Մասնավորապես, 2015 թ. ապրիլին, նախատեսվում է բացել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նոր ցուցադրությունը ընդլայնված և վերազինված շենքում:

2015 թ. հուլիսին նախատեսվում է հյուրընկալել ցեղասպանագետների միջազգային ընկերակցության տարեկան՝ 12-րդ միջազգային հեղինակավոր կոնգրեսը:

Շարունակվելու են աշխատանքները Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի սկզբունքորեն նոր ցուցադրության գիտական և դիզայներական մշակման ուղղությամբ, որը՝ ներկայացվելու է Հայոց ցեղասպանության ընդլայնված թանգարանում:

2012 թվականից սկսած ՀՑԹԻ-ն սկսել է Ռաֆայել Լեմկինի անվան կրթաթոշակային ծրագիրը, որի շրջանակներում ամեն տարի արտասահմանից մեկ երիտասարդ գիտաշխատող մեկ ամիս ժամանակահատվածով հյուրընկալվում է Հայաստանում՝ Հայոց ցեղասպանության պատմության թեմայով ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: 2015թ. նախատեսվում է շարունակել այդ ծրագրի իրականացումը:

Շարունակվելու է նաև գրահրատարակչական գործունեությունը: 2015 թվականին ՀՑԹԻ-ը նախատեսում է հրատարակել մի շարք գիրք: Այդ շարքում ներառվելու են նաև թանգարան-ինստիտուտի գիտաշխատողների հեղինակած մենագրությունները: Բացի այդ, 2015թ. հրատարակվելու են թանգարան-ինստիտուտի անգլալեզու նոր հանդեսի հաջորդ երկու համարները և «Ցեղասպանագիտական հանդեսի» պարբերականի հերթական համարը:

Հավաքչական աշխատանքներ ևս լինելու են ՀՑԹԻ գործունեության ոլորտում:

Ընթացիկ տարու ՀՑԹԻ-ի կաքի շրջանակներում իրագործվող աշխատանքները շարունակվելու են՝ այն ավելի արդիական դարձնելու և նորահայտ նյութով հարստացնելու համար: Մասնավորապես, նախաեսված է մի քանի օնլայն ցուցադրությունների զետեղում:

Համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցությամբ կազմակերպչական աշխատանքներ են տարվելու՝ ապահովելու համար ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի միջոցառումների իրականացումը:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ տարեկան հաշվետվություն:

ՀՀ ԳԱԱ նախագահ
Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյան

(ստորագրություն)

Հավելված 2
«23» 01 2015 թ.
N 24-Ն պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» ծրագրի

ՀՀ Ը/Կ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Իրականացվելիք միջոցառման Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	Պահանջվող գումարը (հազար դրամ համաձայն Պայմանագրի 5.2. կետի)
	Առաջին փուլ	Թանգարանային նոր հիմնական ցուցադրության նախապատրաստում: Ծիծեռնակաբերդի զբոսայգու տարածքի բարեկարգում և խնամք: Հավաքչական աշխատանքներ: Գրահրատարակչություն: Նորահայտ նյութերի գիտական մշակում: Հայոց ցեղասպանության թանգարանի գործունեության ապահովում: «Ցեղասպանագիտական հանդես» և անգլիալեզու «Հայոց ցեղասպանության ուսումնասիրության միջազգային հանդես» պարբերականների տարվա առաջին համարների հրատարակություն:	Շարունակվելու է հավաքչական աշխատանքը: Զուգահեռ իրականացվելու է առկա նյութերի և նորահայտ նմուշների գիտական մշակում: Հայոց ցեղասպանության թանգարանի գործունեության կազմակերպում, օտարերկրյա պատվիրակությունների ընդունում և էքսկուրսիաների ապահովում: Թանգարանի ընդլայնված տարածքում գիտական նոր ցուցադրության կազմակերպում: Սկզբնաղբյուրային նշանակության գրքերի, հուշագրությունների հրատարակություն: Ծիծեռնակաբերդի զբոսայգու տարածքի խնամք: Այս կարգի աշխատանքները հանդիսանում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները, կրում են շարունակական բնույթ և ընթանալու են ամբողջ տարվա ընթացքում: Այդ իսկ պատճառով հաջորդ պունակներում լրացուցիչ չեն նշվի:	31.03.2015	18.860,920

Երկրորդ փուլ	Ռաֆայել Լեմկինի անվան կրթաթոշակի հերթական փուլի մեկնարկ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության հարյուրամյակի միջոցառումների նախապատրաստում և կազմակերպում: Թանգարանային նոր հիմնական ցուցադրության բացում: Միջազգային համագործակցության ընդլայնում: Գրահրատարակություն:	Ռաֆայել Լեմկինի անվան կրթաթոշակի մասնակիցների հյուրընկալում, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100 ամյակին նվիրված միջոցառումների անցկացում: Միջազգային համագործակցության խորացում: Թանգարային հիմնական ցուցադրության բացում: Ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպում: Գրքերի հրատարակություն:	30.06.2015	23576150
Երրորդ փուլ	Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 12-րդ միջազգային գիտաժողովի հյուրընկալում և անցկացում: Հայոց ցեղասպանության տարբեր ասպեկտներին նվիրված ուսումնասիրություններ, մասնավորապես մշակութային ժառանգության ոչնչացման, հետցեղասպանական շրջանի որբահավաք աշխատանքների ուսումնասիրություն: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նոր գրականության ձեռքբերում:	Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 12-րդ միջազգային գիտաժողովի անցկացում: Նոր հետազոտությունների հրատարակում: հավաքչական աշխատանքի շարունակություն, նորահայտ նյութերի գիտական մշակում, ժամանակավոր ցուցադրության կազմման և կազմակերպչական աշխատանքներ:	30.09.2015	23576150
Չորրորդ փուլ	Հայոց ցեղասպանության ժխտման, մշակութային ասպեկտների, պատմագրության և աղբյուրագիտության վերաբերյալ նոր ուսումնասիրությունների անցկացում, հետցեղասպանական շրջանի որբահավաք և	Գիտական հոդվածների պատրաստում, հավաքչական աշխատանք, թանգարանի վեբկայքի սպասարկման աշխատանքներ, հրատարակչություն:	30.12.2015	28291380

որբախնամ
աշխատանքների
ուսումնասիրություններ:
«Ցեղասպանագիտական
հանդես» և անգլիալեզու
«Հայոց ցեղասպանության
ուսումնասիրության
միջազգային հանդես»
պարբերականների
տարվա երկրորդ
համարների
հրատարակություն:

Ընդամենը 94304600

ՀՀ ԳԱԱ Նախագահություն

Նախագահ Ռ. Մարտիրոսյան

Ռ.Մարտիրոսյան

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-
ինստիտուտ

Տնօրեն Հայկ Դեմոյան

Հավելված 3
«23» 01 2015թ.
N Ահ-1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահպանում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «23» 01 2015թ. N Ահ-1 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 94304600 (ինսունչորս միլիոն երեք հարյուրչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
Արարատ բանկ ԲԲՀ/հ 1510005175820100
ՀԿՀՀ 00005673
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՊՈԱԿ
Միծեռնակաբերդի հուշահամալիր
Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1810052108913313

Տնօրեն՝ Հայկ Դեմոյան

(ստորագրություն)
Կ. Տ.

«23» 01 հավելված 4
2015 թ.
N 21-1 պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN p/k	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և եկամտային հարկ	58297.8	11659.6	14574.4	14574.4	17489.4
2	Տնտեսական և այլ ծախսեր	36006.8	7201.4	9001.7	9001.7	10802.0
	ընդամենը	**94304.6**	**18860.9**	**23576.1**	**23576.1**	**28291.4**

Տնօրեն _____ Հայկ Դեմոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ _____ Մարգարիտա Խաչատրյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.